ղյոսի, Թադէոսի և Բարդուղիմէոսի, Իգնատիոսի Աստուածազգեցի, Որդւոց որոտման, Սուքիասանց, Աւագ Բշ. և Գշ., Գ. Կիր. Ալուհացից, գլխատման Յովհաննու, Տապանակի, Գանձ Կիրակամտի, Գիշերապաշտման:—Սոցա վերայ աւելացնելու է «Արարատի» 1895 թ. ապրիլ համարում Ն. Քարամեանցի հրատարակած 16 տող գանձը: Տես տպագիր Գանձարանք: Հմմտ. նաև Ս. Կանայեանցի կազմած Ցուցակ հայ. ձեռ. Ներսիս. հոգ. դպրանոցի (Թիֆլիս, 1893, էջ 11—16) հետաքրքրական Գանձարանը՝ 1505 թուին գրուած: Սակայն աւելի լիակատար է վերոյիշեալ Վենետիկեան գըրչագիրը, ուր մէջ կան պահուած Խլաթեցու 41 գանձերը:

5. Գանձ ծննդաբանութեան (տպ. Գիրք Զեան. Կ. Պօլիս, 1752.):

6. «Վասն Մովսիսի Գրոցն»—Մեկնութիւն Արարածոց—որ բաւական ընդարձակ ճառ է՝ հետևողութեամբ Բարսղի Վեցօրէից, Արիստոտելի, Ականց գրոց և Վարդանայ Մեկնութեան գրուած և հետաքրքրական լեզուի կողմից:

7. «Վասն Յեսուայ» (հատուած):

8. «Խրատ ժամանեզաց ըստ արևելեան սահմանաց և սկսուածոյ և աւուրթեան աղաւթիցն,